**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ՈՐՈՇՈՒՄ**

**26.12.2019թ.**

**Արձանագրություն թիվ 5**

**1. Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին կատարված աշխատանքների հաշվետվությունների քննարկման վերաբերյալ.**

1.1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների և ստորաբաժանումների կողմից 2019 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին իրականացված աշխատանքների հաշվետվությունները և երաշխավորել հետագա ֆինանսավորման:

1.2. Հանձնարարել Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Է. Ղազարյանին՝ իրականացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների կողմից 2019-ին ստացված արդյունքների տնտեսական արդյունավետության, ինչպես նաև արտադրության մեջ ներդրման նպատակահարմարության գնահատում:

1.3. Հանձնարարել Մարկետինգի և զարգացման բաժնի պետ Մ. Ղարագյոզյանին՝ իրականացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների հետազոտական ուղղությունների ճշգրտում, օպտիմալացում՝ բացառելով կրկնությունները, բարելավել կազմակերպությունների և ստորաբաժանումների միջև կապը: Իրականացնել նաև ստացված լավագույն արդյունքների հանրայնացում, առևտրայնացում, և, հատկապես, ներդրում ՀԱԱՀ տնտեսություններում:

1.4. Հանձնարարել ՀԱԱՀ գիտական կազմակերպությունների ու ստորաբաժանումների ղեկավարներին՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում ստացված արդյունքները հրապարակել նաև ՀԱԱՀ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերականում:

1.5. Հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին տարեկան երկու անգամ կազմակերպել գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի հաշվետվությունների քննարկում:

1.6. Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ շարունակել Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքների պահպանում ու զարգացում» ծրագրերի շրջանակներում 2019թ. ընթացքում ստացված լավագույն արդունքների հետազոտությունները և որպես ավարտական աշխատանքներ հանձնարարել ՀԱԱՀ ուսանողներին ու մագիստրանտներին:

**2. ՀԱԱՀ ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի տվյալագիտության ամբիոնի հայցորդ Գևորգ Հարությունի Քեշիշյանի թեկնածուական ատենախոսությունը հրապարակային պաշտպանության երաշխավորելու հարցի վերաբերյալ.**

Գևորգ Հարությունի Քեշիշյանի «Տնտեսական աճի վրա գործազրկության մակարդակի տնտեսավիճակագրական վերլուծությունը ՀՀ օրինակով» վերնագրով՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

**3. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և գիտական հետազոտությունների աջակցության Եվրասիական ասոցիացիայի հետ համատեղ անցկացվող գիտական հետազոտություններ բազմակողմ ծրագրերի աջակցության մրցույթին ներկայացվող հայտերի վերաբերյալ.**

Երաշխավորել «Ուղղորդված պրոբիոտիկներ ջրային կամ ակվակուլտուրաների համար» և «Լոլիկի ավանդական (ազգային) սորտերի և բարձր արտադրողականությամբ հիբրիդների խորը վերամշակման գիտական հիմքերի մշակումը բուսաբուծության համար՝ ուղղորդված պրոբիոտիկների, և մարդու սննդային ախտաբանության պոլինոզոլոգիական կանխարգելման համար՝ լիկոպին պատրաստուկի ստացմամբ» վերնագրերով հայտերը՝ գիտական հետազոտությունների բազմակողմ ծրագրերի աջակցության մրցույթին ներկայացնելու համար:

**4. Համալսարանում իրականացվող գույքագրման, հիմնական միջոցների համարակալման ու կոդավորման աշխատանքների վերաբերյալ.**

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ սեղմ ժամկետում իրականացնել ոչ պիտանի գույքի դուրսգրման աշխատանքները, զեկուցագրերով հստակեցնել պիտանի գույքի ցուցակները:

**5. ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի բաղադրիչների փոփոխության վերաբերյալ.**

5.1. ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում հաշվի առնել նախկինում կատարված փոփոխությունները.

- հանել ակտիվության բաղադրիչը,
- հաճախումների բաղադրիչին հատկացնել 20-30 %,
- բազմագործոնային համակարգը ներառում է նաև ինքնուրույն կամ կուրսային աշխատանք, ընթացիկ քննություն/քննություններ, ամփոփիչ քննություն կամ ստուգարք (նվազագույնը 40 %): Կարող է ներառել նաև ընթացիկ հարցում:

5.2. ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում բաղադրիչների տոկոսային հարաբերակցությունը սահմանել և հաստատել ամբիոնի նիստով:

ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ԳԻՏ. ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ